

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 80

21 մայիսի, 2020 թվական

ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի մայիսի 18-ի N 472-Ա N 473-Ա, N 477-Ա, N 479-Ա, N 481-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի մայիսի 19-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝

- 1) «Պաուլաներ» ՍՊԸ, ք. Երևան, Թամանյան 6/7-16 և Թամանյան 3-140, (ՀՎՀՀ 02694241).
- 2) Ա/Ձ «Տիգրան Հարությունյան», Երևան-Սիսիան-Գորիս միջպետական ճանապարհ, (ՀՎՀՀ 77941577).
- 3) Ա/Ձ «Լուիզա Հովհաննիսյան», Վայոց ձորի մարզ, ք. Վայք, Ջերմուկի խճ. 22 ա, (ՀՎՀՀ 32538745).
- 4) Ա/Ձ «Սոնիկ Հակոբյան» Վայոց ձորի մարզ, ք. Վայք, Ազատության 1.
- 5) Ա/Ձ «Ստեփան Շահումյան», Վայոց ձորի մարզ, ք. Վայք, Ջերմուկի խճ. 69/3, (ՀՎՀՀ 76850927).
- 6) Ա/Ձ «Տիգրան Ավետիսյան», Վայոց ձորի մարզ, ք. Վայք, Ազատության փող. (ՀՎՀՀ 76836816).
- 7) Ա/Ձ «Օֆելյա Հարությունյան», Վայոց ձորի մարզ, ք. Վայք, Ջերմուկի խճ. 71

- 8) Ա/Ձ «Արսեն Վարդանյան», Արմավիրի մարզ, գ. Մյասնիկյան, Երևանյան 23.
(ՀՎՀՀ 85399973).
- 9) «Վան Վասպուրական» ՍՊԸ, Արմավիրի մարզ, ք. Արմավիր,
Հանրապետության 32/1, (ՀՎՀՀ 04406654):
2. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Գեորգի Ավետիսյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:
3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:
4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Արման Սարգսյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 21/05/20 13:24:45 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ